

թ. Գորիս

20 \_\_\_\_ թ.

Մի կողմից  Գորիսի պետական համալսարանի  պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝  
Համալսարան)՝ ի դեմս համալսարանի ղեկավարի, տ.գ.թ., որդեստ Տ.Վ.Վանդունցի, որը գործում է համալսարանի  
կանոնադրության հիման վրա և մյուս կողմից  
Համալսարանի \_\_\_\_\_ ֆակուլտետի \_\_\_\_\_

մասնագիտության  
կուրս ընդունված ուսանողը (այսուհետ՝  
Ուսանող) \_\_\_\_\_, ումքեր ստորև  
հիշատակվում են որպես

անուն, հայրանուն, ազգանուն

կողմ  և միասին՝ որպես  կողմեր  կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. Պայմանագրի իրավական հիմքերը

1.1 Սույն պայմանագրի իրավական հիմքերն են ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը, ՀՀ  Կրթության մասին  օրենքը,  Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին  ՀՀ օրենքը,  Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին  ՀՀ օրենքը, ՀՀ ենթաօրենսդրական ակտերը, համալսարանի՝ կանոնադրությունը, ներքին կարգապահական կանոնները, ներքին իրավական ակտերը և այլ իրավական ակտեր:

1.2 Ընդունելության քննությունները հաջողությամբ հանձնած և Համալսարանում կցագրված դիմորդների հետ Պայմանագիրը կնքվում է առկա կրթությամբ դիմորդների կողմից մինչև սեպտեմբերի 20-ը (քսանը) ներառյալ, հեռակա կրթությամբ դիմորդների կողմից ուսումնական պարապմունքները սկսելուց հաջորդող մեկ շաբաթ ընթացքում ուսման վարձի առաջին կիսամյակի գումարը վճարելու դեպքում:

### 2. Պայմանագրի առարկան

2.1. Սույն պայմանագրի առարկան ուսանողի՝ \_\_\_\_\_ ձևով, \_\_\_\_\_

/Սովա, հեռակա/

/բակալավր, մագիստրատուր/

կրթական ծրագրով ուսումնառությունն իրականացնելու ակադեմիական և ֆինանսական կարգն ու պայմաններն են:

2.2. Ուսանողի ուսումնառության ժամկետը \_\_\_\_\_ տարի \_\_\_\_\_ ամիս է:

### 3. Համալսարանի պարտականությունները և իրավունքները

3.1. Համալսարանը պարտավորվում է.

3.1.1. Կազմակերպել ուսանողի ուսուցումը՝ սահմանված կարգով հաստատված մասնագիտական կրթական ծրագրի համաձայն:

3.1.2. Ստեղծել մասնագիտական կրթական ծրագրով նախատեսված ուսումնական գործընթացը պատշաճ ապահովող հնարավոր բոլոր պայմանները:

3.1.3. Ուսանողի համար ստեղծել հնարավորություններ՝ օգտվելու Համալսարանի գրադարանից, համակարգչային լսարաններից, լաբորատորիաներից, մարզական և այլ ստորաբաժանումների ծառայություններից:

3.1.4. Ծանոթացնել համապատասխան կրթական ծրագրի իրականացման կարգին, ներքին կարգապահական կանոններին, ուսուցմանն առնչվող այլ փաստաթղթերին:

3.1.5. Ուսումնառությունն ավարտելու և ամփոփիչ ատեստավորումը հաջողությամբ անցնելու դեպքում Ուսանողին շնորհել ավարտական փաստաթուղթ՝ դիպլոմ:

3.1.6. Սույն պայմանագրի 3-րդ բաժնի 3.1 կետի 3.1.5. ենթակետով սահմանված պահանջները չբավարարելու հիմքով ավարտական փաստաթուղթ չստանալու դեպքում ուսանողի ցանկությամբ վերջինիս տրամադրել սահմանված նմուշի ակադեմիական տեղեկանք:

3.2. Համալսարանն իրավունք ունի.

3.2.1. Օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով և ներքին իրավական այլ ակտերով սահմանված պարտավորությունները չկատարելու, դրանք ոչ պատշաճ կատարելու կամ խախտելու, ինչպես նաև ակադեմիական անբավարար առաջադիմության դեպքերում Ուսանողի նկատմամբ կիրառել կարգապահական պատասխանատվության միջոցներ, այդ թվում հեռացնել Համալսարանից:

3.2.2. Վճարովի համակարգում սովորող ուսանողները, որոնք սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում չեն վճարում ուսման վարձը, կարող են հեռացվել Համալսարանից:

3.2.3. Իր ինքնավարության շրջանակներում կազմակերպել ուսումնական գործընթաց՝ այդ թվում ուսանողների ատեստավորման ձևերը և կարգը, քստ գործող ուսումնական պլանների և չափորոշիչների:

3.2.4. Գործող ուսումնական պլաններին ու չափորոշիչներին համապատասխան իր ինքնավարության շրջանակներում կազմակերպել և իրականացնել Ուսանողի ուսումնական գործընթացը և ատեստավորումը:

### 4. Ուսանողի պարտականությունները և իրավունքները

4.1. Ուսանողի հարաբերությունները Համալսարանի հետ կանոնակարգվում են Համալսարանի կանոնադրությամբ և սույն պայմանագրով որոշված ուսանողների իրավունքներով և պարտականություններով:

4.2. Ուսանողը պարտավորվում է.

4.2.1. Կատարել Համալսարանի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված իր պարտականությունները:

4.2.2. Սահմանված կարգով և ժամկետում կատարել ուսումնական պլաններով և առարկայական ծրագրերով (մոդուլներով) սահմանված բոլոր առաջադրանքները, հաճախել դասերին և հանձնել ստուգաքննությունները և քննությունները:

4.2.3. Տիրապետել տվյալ մասնագիտության մասնագիտական կրթական ծրագրերով սահմանված գիտելիքներին, կարողություններին և հմտություններին ու սահմանված ժամկետներում կատարել առարկայական ծրագրերով նախատեսված ուսումնական առաջադրանքները:

4.2.4. Ակադեմիական պարտքեր ունենալու դեպքում դրանք հանձնել ռեկտորատի կողմից սահմանված ժամկետներում և կարգով:

4.2.5. Խնամքով և հոգատարությամբ վերաբերվել Համալսարանի գույքին:

4.2.6. Ուսանողն ուսման վարձը կարող է վճարել ամսական, կիսամյակային կամ տարեկան վճարմամբ կամ օրենսդրությամբ սահմանված այլ կարգով: Ուսման վարձի վճարման ընտրությունը ամրագրվում է պայմանագրով իսկ վճարման պայմանների փոփոխությունը կատարվում է ուսանողի կողմից ներկայացված դիմումի համաձայն:

4.2.7. Բարձր պահել համալսարանի պատիվն ու հեղինակությունը, պահպանել վերջինիս կանոնադրության դրույթները և ներքին կարգապահական կանոնները, կատարել դրանցով սահմանված իր պարտականությունները:

4.2.8. Ենթարկվել համալսարանի ներքին իրավական ակտերով սահմանված կանոններին:

4.2.9. Վճարովի համակարգ սովորող ուսանողը պարտավորվում է վճարել ուսման վարձը սույն պայմանագրով սահմանված ժամկետներում իսկ վարձամսկետ ազատման դեպքում ուսանողը պարտավորվում է մինչև վաղաժամկետ ազատման օրը կատարել համալսարանի հանդեպ ունեցած ուսման վճարային պարտավորությունները՝ հակառակ դեպքում ուսանողը ենթակա է հեռացման:

4.2.10. Լինել շրջահայաց, Համալսարանի ինտերնետային պաշտոնական կայք-էջի միջոցով ծանոթանալ պայմանագրի կցման համար հիմք հաղիսացած իրավական ակտերին, այդ թվում Համալսարանի և Ուսանողների հարաբերությունները կարգավորող իրավական ակտերին, դրանցում կատարվող փոփոխություններին, Համալսարանի ծանուցումներին, Էթիկայի (բարեվարքության) կանոններին և կատարել ու պահպանել դրանց պահանջները:

4.2.11 Լինել հետևողական, իրավական որևէ հիմքով ուսման վարձի փոխհատուցում ստանալու, ինչպես նաև ուսումնառության ընդատումը ձևակերպելու համար Համալսարանի ղեկավարությանը դիմել սահմանված ժամկետի և կարգի պահպանմամբ:

4.2.12. Պայմանագրի 4.2.11. կետի պահանջները չկատարելու բոլոր ռիսկերն ու բացասական հետևանքները կրում է Ուսանողը:

4.3. Ուսանողն իրավունք ունի.

4.3.1. Բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից՝ յուրացնելու ցանկացած այլ ուսումնական դասընթաց, որը դասավանդվում է տվյալ կամ ցանկացած այլ բարձրագույն ուսումնական հաստատությունում՝ Համալսարանի համաձայնությամբ:

4.3.3. Մասնակցելու օրենքով կամ Համալսարանի կանոնադրությամբ նախատեսված՝ Համալսարանի համապատասխան կառավարման մարմինների աշխատանքներին:

4.3.4. Բողոքարկելու Համալսարանի ղեկավարության հրամաններն ու կարգադրությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.3.5. Ծանոթանալու համալսարանի կանոնադրությանը և ուսումնական գործընթացին անշեղջիկ նորմատիվ այլ փաստաթղթերին, կնքելու ուսումնառության պայմանագիր:

4.3.6. Ընտրելու մասնագիտություն, ուսուցման ձևը, զբաղվելու հետազոտություններով, ցանկացած կրթական աստիճանում ընդհատելու կամ շարունակելու բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությունը:

4.3.7. Օգտվելու Համալսարանի գրադարանից, համակարգչային լսարաններից, լաբորատորիաներից և այլ ստորաբաժանումների ծառայություններից, մասնակցելու գիտահետազոտական աշխատանքներին, սեմինարներին և գիտաժողովներին.

4.3.8. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օգտվելու ուսման տարեկան վարձի մասնակի կամ լրիվ փոխհատուցման իրավունքից:

4.3.9. ՀՀ օրենսդրությամբ և համալսարանի կանոնադրությամբ սահմանված կարգով ստանալու սահմանված չափի, ներառյալ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից նշանակված անվանական կրթաթոշակ, դրամաշնորհի ինչպես նաև ուսանողական վարկ:

4.3.10. ՀՀ օրենսդրությամբ և Համալսարանի կողմից սահմանված կարգով ուսման բարձր առաջադիմության և գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու համար ստանալու բարոյական և(կամ) նյութական խրախուսանք:

4.3.11. Անհրաժեշտության դեպքում ստանալու համապատասխան տեղ հանրակացարանում՝ Համալսարանի կողմից սահմանված կարգով և պայմաններով:

4.3.12. Գտնվելու արձակուրդում գործող իրավական ակտերով նախատեսված ժամկետով:

4.3.13. Տեղափոխվելու այլ բարձրագույն ուսումնական հաստատություն, ներառյալ օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ համաձայն ՀՀ Կառավարության սահմանած կարգի:

4.3.14. Օրենքներով, համալսարանի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ:

## 5. Ուսման վճարի չափը և վճարման կարգը

5.1. Ուսանողն ընդունվում է \_\_\_\_\_ համակարգ:

*վճարովի / անվճար*

5.2. Վճարովի սովորող ուսանողների ուսման վարձը մեկ ուսումնական տարվա համար կազմում է \_\_\_\_\_  ՀՀ դրամ, կիսամյակի համար \_\_\_\_\_  ՀՀ դրամ, մեկ ամսվա համար \_\_\_\_\_  ՀՀ դրամ,  ՀՀ դրամ:

5.3. Ուսանողն ուսման վարձը վճարում է \_\_\_\_\_ վճարմամբ:

*ամսական/ կիսամյակային/տարեկան*

5.4. Ուսման վարձը վճարվում է անկանխիկ՝ բանկում, սույն պայմանագրով նախատեսված համալսարանի հաշվարկային հաշվին: Ուսանողը պարտավոր է վճարման անդորրագիրը ներկայացնել համապատասխան դեկանատ:

5.5. Վճարված ուսման վարձը ենթակա չէ վերադարձման բացառությամբ ուսումնական տարվա վճարից ավել վճարված գումարը:

5.6. Ուսանողն ուսման ընթացքում կարող է տեղափոխվել վճարովի/անվճար համակարգ Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

5.7. ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիմքերով վճարովի համակարգ ընդունված կամ ուսումնառության ընթացքում վճարովի համակարգ տեղափոխված Ուսանողի համար սահմանված ուսման վարձի չափը հաստատուն է ուսանողի տվյալ կրթական ծրագրով ուսումնառության ողջ ժամանակահատվածի համար:

5.8. Համալսարանից հեռացված (ազատված), այնուհետև սահմանված կարգով ուսանողական իրավունքները վերականգնված ուսանողներն ուսման վարձը վճարում են նոր պայմանագրով սահմանված կարգով, չափով և ժամկետում:

5.9. Համալսարանից հեռացված (ազատված) ուսանողի ուսանողական իրավունքները վերականգնվում են ուսման նախորդ ժամանակահատվածում Ուսանողի՝ Համալսարանի հանդեպ ունեցած դրամական պարտավորությունները կատարելու դեպքում:

5.10. Ուսման վարձը յուրաքանչյուր ամիս վճարելու դեպքում վճարումը կատարվում է մինչև տվյալ ամսվա 15-ը (տասնհինգը) ներառյալ:

5.11. Ամսական ուսման վճարի չափը որոշվում է տվյալ ուսումնական տարվա ուսման վարձի 1/10-ի չափով, այն համարվում է վճարման նվազագույն չափ:

5.12. Կիսամյակի ուսման վճարի չափը որոշվում է տարվա ուսման վճարը կիսամյակների թվին բաժանելու միջոցով:

5.13. Ուսման վարձը կիսամյակներով վճարելու դեպքում առկա ուսուցման համակարգի Ուսանողներն առաջին կիսամյակում տարեկան ուսման վարձի 50%-ը վճարում են մինչև սեպտեմբերի 20-ը (քսանը) ներառյալ, երկրորդ կիսամյակում տարեկան ուսման վարձի մնացած 50%-ը վճարում են մինչև փետրվար ամսվա ավարտը:

5.15. Պայմանագրի գործողության ընթացքում պայմանագրով և ուսումնական ծրագրով սահմանված դասընթացներին և ուսումնական այլ պարտավորություններին ուսանողի բացակայությունը բացակա ժամանակահատվածի համար ուսման վարձը չհաշվարկելու և չբանձնելու համար հիմք չի հանդիսանում:

## 6. Պայմանագիրն ուժի մեջ մտնելը և գործողության ժամկետը

6.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև տվյալ կրթական ծրագրի ավարտը:

6.2 Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերի համաձայնությամբ, Կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

## 7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը

7.1. Սույն պայմանագրով անհաղթահարելի ուժ ասելով հասկացվում է ջրիեղել, հրդեհ, երկրաշարժ և այլ տարերային աղետներ, պատերազմ, ռազմական գործողություններ զինված հարձակում, զանգվածային անկարագություններ, գործադուլներ և այլն:

7.2. Կողմերն իրենց պարտականությունները մասնակիորեն կամ լրիվ չկատարելու համար ազատվում են սույն պայմանագրով սահմանված պատասխանատվությունից, եթե դա տեղի է ունեցել սույն պայմանագրի կնքումից հետո ծագած այնպիսի անհաղթահարելի ուժի հետևանքով, որը կողմերը չեն կարող կանխել կամ

կանխագուշակել, և, որի պատճառով կողմերը չեն կարող մասնակիորեն կամ լրիվ կատարել իրենց վրա վերցրած պարտականությունները:

7.3. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է մեկ ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը՝ այդ մասին տեղյակ պահելով մյուս կողմին:

### **8. Եզրափակիչ դրույթներ**

8.1. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն նույն իրավաբանական ուժը, որոնցից մեկական օրինակ ի պահ է հանձնված կողմերին:

8.2. Սույն պայմանագրում փոփոխություններն ու լրացումները կատարվում են միայն գրավոր կերպով: Այդ փոփոխություններն ու լրացումները կցվում են սույն պայմանագրին և հանդիսանում են նրա անբաժանելի մասը:

8.3. Ակադեմիական փոխատեղման (ռոտացիա) դեպքում սույն պայմանագրի համապատասխան դրույթները տարածվում են անվճար համակարգից վճարովի անցած սովորողների վրա:

8.4. Կողմերի միջև սույն պայմանագրի շուրջն առաջացած վեճերը լուծվում են կողմերի անմիջական բանակցությունների միջոցով:

8.5. Անմիջական բանակցություններ սկսելու օրվանից մեկ ամսվա ընթացքում տարածայնությունները չլուծվելու կամ դրանց լուծման ուղղությամբ առաջընթաց չլինելու դեպքում վեճը ենթակա է լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.6. Կողմերը համաձայնվեցին, որ Պայմանագրի շրջանակում ցանկացած ծանուցում կիրականացնեն Պայմանագրում գրված իրենց էլեկտրոնային հասցեներով, ընդունում են էլեկտրոնային եղանակով ծանուցման պատշաճ լինելը և խոստանում են էլեկտրոնային ծանուցումների պատշաճությունը երբևէ չվիճարկել:

8.7. Կողմերը համաձայնվեցին, որ էլեկտրոնային հասցեներով ծանուցումների իրականացումը պարտադիր է, եթե նույնիսկ Կողմերը էլեկտրոնային հասցեներով ծանուցումներին զուգահեռ ծանուցումներն իրականացնեն նաև ծանուցման այլ եղանակներով:

8.8. Կողմերը պարտավորվում են Պայմանագրում ներկայացված հասցեների փոփոխության մասին պարտադիր հայտել մյուս Կողմին:

8.9. Հասցեների փոփոխության դեպքում Համալսարանը Ուսանողին ծանուցում է պաշտոնական կայք-էջում ազդարարման միջոցով:

8.10. Ուսանողը կրում է հասցեի փոփոխության մասին չհայտնելու, ինչպես նաև իր կողմից նշված էլեկտրոնային հասցեի որևէ պատճառով անհասանելի լինելու դեպքում տվյալ հասցեով ծանուցումները չստանալու բոլոր ռիսկերն ու բացասական հետևանքները:

8.11. Բոլոր այն հարցերը, որոնք չեն կարգավորվել սույն պայմանագրով, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.12. Պայմանագրի օրինակների միջև հակասության դեպքում հիմք է ընդունվում՝ նախապատվությունը տրվում է Համալսարանում պահվող օրինակին:

8.13. Ուսանողը կարողացել է հայտարարեց, որ ինքը ծանոթացել է Պայմանագրին, Համալսարանի կանոնադրությանը, Ներքին կարգապահական կանոններին, ուսումնական գործընթացը կարգավորող իրավական ակտերին, համաձայն է Համալսարանի հետ հարաբերություններում գործել նշված իրավական ակտերով և կատարել ու պահպանել այդ իրավական ակտերի պահանջները, որը հաստատում է նաև Պայմանագիրը ստորագրելով:

### **9. Կողմերի հասցեները, ստորագրությունները և այլ տվյալներ**

#### **Համալսարան**

հասցե՝ 3205, ք. Գորիս, Ավանգարո 2

հեռ. 0284 2-27-67, 098 19 67 01

Էլ. հասցե՝ gorsu1967@gmail.com

ՀՀՀՀ 09210606

հ/հ 900288000012

**Ռեկտոր՝ Տ.Վ. Վանդուկց**

ստորագրություն

#### **Ուսանող**

Ազգանուն \_\_\_\_\_ Մյուսն Հայրանուն \_\_\_\_\_

անձնագրի սերիա \_\_\_\_\_ № \_\_\_\_\_

տրված է \_\_\_\_\_ 20 \_\_\_\_\_

թ. \_\_\_\_\_  
ում կողմից \_\_\_\_\_

հաշվառման հասցե \_\_\_\_\_

բնակության վայրի \_\_\_\_\_

Կ.Տ.

հասցե \_\_\_\_\_

\_\_\_\_\_

հեռ.՝

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

ստորագրություն